



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2003թ. չորրորդ եռամսյակում /վերլուծություն/

2003թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 22398 գործարքներ, որոնց քանակը 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 10.0%-ով, իսկ 2003թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 12.9%-ով: 2003թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2003թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 9807 օտարման գործարքների 89.8%-ը կազմել են առուվաճառքները, 9.5%-ը նվիրատվությունները և 0.7%-ը փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների 45.8%-ը արձանագրվել է Երևան քաղաքում, ընդ որում 46.6%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2003թ. չորրորդ եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 14.8%-ով, իսկ 2003թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 13.3%-ով: 2003թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 3926 առուվաճառքի գործարքների 66.5%-ը արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 0.6%-ով, իսկ 2003թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 6.6%-ով:

2003թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. չորրորդ եռամսյակ /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլարով/		
		2002թ. չորրորդ եռամսյակ	2003թ. չորրորդ եռամսյակ	2003թ. երրորդ եռամսյակ
Կենտրոն	220.0-970.0	311.3	408.7	392.0
Արաբկիր	170.0-560.0	207.7	306.3	293.0
Քանաքեռ-Զեյթուն	120.0-330.0	131.7	194.1	181.8
Նոր-Նորք	100.0-250.0	110.7	152.1	140.5
Ավան	100.0-190.0	95.3	152.2	139.1
Էրեբունի	100.0-300.0	118.7	163.5	151.2
Շենգավիթ	100.0-250.0	114.7	163.3	151.1
Դավթաշեն	100.0-260.0	109.5	195.2	177.9
Աջափնյակ	90.0-240.0	113.0	172.2	154.8
Մալաթիա-Սեբաստիա	90.0-240.0	104.7	159.4	147.7
Նուբարաշեն	50.0-100.0	50.5	70.5	67.9
Երևան	<b>50.0-970.0</b>	<b>133.4</b>	<b>194.3</b>	<b>181.6</b>

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. չորրորդ եռամսյակում, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գները, 2003թ.

երրորդ եռամսյակի համեմատ աճել են 7.0%-ով, իսկ 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ 45.7%-ով:

2003թ. չորրորդ եռամսյակում հանրապետության մարզերում գրանցված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն նվազման միտում:

2003թ. չորրորդ եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1375 բնակարաններ, որոնց քանակը 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 5.1%-ով, իսկ 2003թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 1.0%-ով:

2003թ. չորրորդ եռամսյակում ըստ հանրապետության մարզերի քաղաքների, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. չորրորդ եռամսյակ /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			2002թ. չորրորդ եռամսյակ	2003թ. չորրորդ եռամսյակ	2002թ. երրորդ եռամսյակ
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	59.7	62.8	62.5
	Ապարան	18.0-38.0	25.7	27.4	27.2
	Թալին	18.0-38.0	22.4	25.2	25.1
Արարատ	Արտաշատ	22.0-85.0	52.7	54.8	54.5
	Մասիս	20.0-85.0	53.3	54.4	54.4
	Վեդի	20.0-45.0	29.1	31.7	31.6
	Արարատ	22.0-40.0	29.4	31.6	31.5
Արմավիր	Վաղարշապատ	35.0-105.0	75.2	84.7	84.3
	Արմավիր	21.0-78.0	42.5	45.7	45.5
	Մեծամոր	17.0-50.0	29.6	30.9	30.8
Գեղարքունիք	Սևան	20.0-50.0	29.7	30.7	30.5
	Գավառ	20.0-55.0	29.2	30.5	30.3
	Մարտունի	18.0-55.0	28.4	29.7	29.5
	Վարդենիս	12.0-21.0	16.4	17.3	17.2
Լոռի	Վանաձոր	30.0-85.0	59.0	61.7	60.9
	Ստեփանավան	20.0-55.0	29.2	33.4	33.2
	Սյիտակ	17.0-43.0	22.8	24.1	23.9
	Այվերդի	17.0-50.0	24.3	25.6	25.4
	Տաշիր	15.0-26.0	18.2	19.4	19.3
Կոտայք	Աբովյան	40.0-100.0	77.3	84.2	83.9
	Նոր Հաճն	35.0-75.0	50.3	52.3	52.1
	Բյուրեղավան	17.0-48.0	34.0	35.2	35.2
	Եղվարդ	28.0-55.0	38.6	40.7	40.5
	Հրազդան	18.0-65.0	28.6	31.0	30.7
	Ծաղկաձոր	22.0-95.0	72.3	75.8	75.7
	Չարենցավան	13.0-55.0	29.1	31.1	31.1
Շիրակ	Գյումրի	30.0-97.0	62.3	71.9	71.7
	Արթիկ	17.0-48.0	24.2	25.3	25.2
	Մարալիկ	15.0-45.0	21.5	23.7	23.6

<b>Սյունիք</b>	Գորիս	21.0-46.0	27.5	29.7	29.6
	Կապան	18.0-55.0	25.9	29.4	29.1
	Միսիան	17.0-57.0	26.1	27.6	27.5
	Մեղրի	18.0-58.0	22.9	25.2	25.1
	Քաջարան	15.0-30.0	16.7	18.5	18.4
<b>Վայոց Ձոր</b>	Վայք	15.0-48.0	31.3	35.3	35.3
	Եղեգնաձոր	20.0-58.0	45.3	46.9	46.8
	Ջերմուկ	20.0-55.0	38.0	41.2	41.1
<b>Տավուշ</b>	Դիլիջան	15.0-55.0	32.9	36.2	36.2
	Իջևան	23.0-50.0	39.3	40.4	40.3
	Բերդ	15.0-45.0	27.3	29.3	29.2
	Նոյեմբերյան	15.0-45.0	25.1	26.8	26.7

2003թ. չորրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների եռամսյակային աճը կազմել է 0.5%, իսկ տարեկան աճը՝ 7.2%:

2003թ. չորրորդ եռամսյակում մարզերում արձանագրվել են անհատական բնակելի տների 1485 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 359, մյուս մարզերում միասին վերցրած՝ 1126: 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 30.6%-ով, այդ թվում, Երևան քաղաքում՝ 20.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 34.0%-ով: Ընդ որում 2003թ. չորրորդ եռամսյակում հանրապետության մարզերում գրանցված առանձնատների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

Երևան քաղաքի համայնքներում 2003թ. չորրորդ եռամսյակում անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. չորրորդ եռամսյակ /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		2002թ. չորրորդ եռամսյակ	2003թ. չորրորդ եռամսյակ	2003թ. երրորդ եռամսյակ
Կենտրոն	210.0-990.0	313.7	422.9	399.7
Արաբկիր	160.0-580.0	208.5	310.8	296.0
Քանաքեռ-Զեյթուն	110.0-360.0	133.7	196.4	183.8
Նորք-Մարաշ	120.0-240.0	255.5	311.8	297.3
Ավան	95.0-200.0	113.5	151.5	140.3
Էրեբունի	95.0-320.0	120.3	162.2	152.3
Շենգավիթ	85.0-260.0	115.3	164.1	152.0
Դավթաշեն	105.0-260.0	113.3	194.3	179.3
Աջափնյակ	85.0-230.0	113.5	170.2	156.0
Մալաթիա-Մեքաստիա	95.0-250.0	116.0	159	148.7
Նուբարաշեն	55.0-110.0	54.7	73.4	71.2

<b>Միջինը Երևանում</b>	<b>55.0-990.0</b>	<b>150.7</b>	<b>210.6</b>	<b>197.9</b>
------------------------	-------------------	--------------	--------------	--------------

- Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայի վերաբերյալ տեղեկությունները ընդգրկված չեն
- Աջափնյակ համայնքի տվյալներում Վահագնի թաղամասի վերաբերյալ տեղեկությունները ընդգրկված չեն

չեն

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. չորրորդ եռամսյակում առանձնատների 1քմ շինության շուկայական միջին գները 2003թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել են 6.4%-ով, իսկ 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 39.7%-ով:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջին գները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. չորրորդ եռամսյակ /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			2002թ. չորրորդ եռամսյակ	2003թ. չորրորդ եռամսյակ	2003թ. երրորդ եռամսյակ
Արագածոտն	Աշտարակ	35.0-100.0	78.8	82.9	82.6
	Ապարան	20.0-45.0	35.7	38.8	38.8
	Թալին	15.0-35.0	25.6	28.1	28.1
Արարատ	Արտաշատ	28.0-80.0	59.6	61.9	61.7
	Մասիս	27.0-80.0	59.5	62.4	62.4
	Վեդի	25.0-60.0	34.6	36.3	36.3
	Արարատ	25.0-60.0	34.6	37.5	37.4
Արմավիր	Վաղարշապատ	50.0-110.0	77.5	89.7	89.4
	Արմավիր	35.0-90.0	47.7	52.3	52.2
Գեղարքունիք	Սևան	25.0-60.0	34.9	36.4	36.4
	Գավառ	25.0-65.0	37.7	39.9	39.9
	Մարտունի	20.0-55.0	31.9	33.9	33.8
	Վարդենիս	15.0-45.0	19.3	21.3	21.3
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	64.4	68.9	68.5
	Ստեփանավան	20.0-50.0	31.9	33.7	33.5
	Սյիտակ	17.0-50.0	23.7	24.1	24.1
	Ալավերդի	18.0-50.0	25.5	25.9	25.8
	Տաշիր	15.0-30.0	18.7	19.9	19.9
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	88.7	92.5	92.2
	Նոր Հաճն	35.0-80.0	52.1	54.2	54.2
	Բյուրեղավան	15.0-50.0	36.0	38.2	38.2
	Եղվարդ	23.0-70.0	44.5	47.3	47.2
	Հրազդան	25.0-65.0	37.3	40.1	39.9
	Ծաղկաձոր	45.0-110.0	83.6	85.2	85.1
	Չարենցավան	25.0-50.0	32.1	33.4	33.3
Շիրակ	Գյումրի	40.0-110.0	85.4	90.9	90.7
	Արթիկ	18.0-55.0	25.9	28.7	28.6
	Մարալիկ	15.0-45.0	22.6	23.9	23.9
Սյունիք	Գորիս	22.0-65.0	30.2	31.7	31.5
	Կապան	25.0-55.0	28.6	31.1	31.0
	Սիսիան	18.0-50.0	26.8	28.7	28.6
	Մեղրի	18.0-40.0	23.8	28.2	28.2
	Քաջարան	15.0-30.0	17.4	19.2	19.2
Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	34.4	37.0	36.9
	Եղեգնաձոր	20.0-65.0	46.9	49.3	49.1
	Զերմուկ	25.0-60.0	40.6	43.4	43.2
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	37.4	39.2	39.1

	Իջևան	30.0-70.0	39.5	41.2	41.2
	Բերդ	20.0-50.0	29.0	30.9	30.8
	Նոյեմբերյան	20.0-50.0	28.8	30.8	30.7

2003թ. չորրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների եռամսյակային աճը կազմել է 0.2%, իսկ տարեկան աճը՝ 6.5 % :

Ընդհանուր առմամբ, հանրապետությունում 2003թ չորրորդ եռամսյակում օտարվել են 888.22 հա /56.59 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 731.24 հա գյուղատնտեսական նշանակության: Ընդ որում, 845.97 հա /54.82 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են առուվաճառքի, որից 699.80 հա գյուղատնտեսական նշանակության, 40.90 հա /1.29 հա Երևանում/ նվիրատվության, որից 31.17 հա գյուղատնտեսական նշանակության և 1.36 հա /0.48 հա Երևանում/ փոխանակման, որից 0.26 հա գյուղատնտեսական նշանակության գործարքներ:

Առավել մեծ մակերեսով հողեր են վաճառվել Արմավիրի մարզում՝ 271.63 հա, որից 264.02 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքրը՝ Տավուշի մարզում՝ 8.52 հա, որից 7.80 հա գյուղատնտեսական նշանակության:

Ստորև ներկայացվում է 2003թ. չորրորդ եռամսյակում մարզերում հողերի առուվաճառքի /բացառությամբ արդյունաբերության նշանակության հողերի/ գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտես. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտես. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	109	9.59	47	27.56	0	0.00	164	9.88	28	7.07
Արագածոտն	14	4.60	11	1.46	0	0.00	114	56.11	47	5.06	2	0.12
Արարատ	0	0.00	33	3.85	5	1.26	295	99.93	98	8.52	0	0.00
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	208	264.02	57	6.24	12	1.37
Գեղարքունիք	0	0.00	14	1.68	4	1.50	13	15.23	48	5.91	2	0.55
Լոռի	0	0.00	12	1.46	0	0.00	64	56.63	7	1.30	2	0.12
Կոտայք	23	7.73	33	2.98	2	4.60	198	79.34	182	17.80	11	4.26
Շիրակ	0	0.00	0	0.00	1	0.03	84	81.95	13	1.15	1	0.04
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	20	14.86	5	0.64	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	3	2.69	18	6.61	4	0.38	1	0.20
Տավուշ	0	0.00	0	0.00	4	0.14	16	7.80	7	0.59	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>37</b>	<b>12.33</b>	<b>212</b>	<b>21.02</b>	<b>66</b>	<b>37.78</b>	<b>1030</b>	<b>682.48</b>	<b>632</b>	<b>57.47</b>	<b>59</b>	<b>13.73</b>

2003թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հողերի 2048 առուվաճառքի գործարքներ, որից 1068-ը՝ գյուղատնտեսական, 970-ը՝ բնակավայրերի, 10-ը՝ արդյունաբերական օբյեկտների:

2003թ. չորրորդ եռամսյակում հողերի առուվաճառքներից 219-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 68-ը /16.73 հա/ Երևանում, իսկ 151-ը /26.97 հա/ մյուս մարզերում: Աճուրդային կարգով վաճառված հողերից 37 միավորը /12.33 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական, 169-ը /15.55 հա/ բնակելի կառուցապատման

/տնամերձ/, 12-ը /14.62 հա/ հասարակական կառուցապատման և 1-ը /1.20 հա, Արարատի մարզում/ արդյունաբերական օբյեկտների:

2003թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում վաճառված 10 միավոր արդյունաբերական օբյեկտների հողերից 7 միավորը գրանցվել է /15.32 հա/ Արարատի, 2-ը /0.14 հա/ Կոտայքի մարզերում և 1-ը /0.66 հա/ Երևանում: 2003թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 2 գործարք /15.0 հա, Արարատի մարզում/, որից 1 միավորը /5.00 հա/ գյուղատնտեսական նշանակության:

2003թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների 1068, այդ թվում աճուրդ-վաճառքների 37, դատարանի վճռով 5 և վարձակալության իրավունքի վաճառքի 1 /վերջիններս ստորև ներկայացված աղյուսակում ընդգրկված չեն/ գործարքներ, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1հա մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսատղ գյուղ.նշ. հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսատղ գյուղ.նշ. հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն և	Միջին			Նվազագույն	Առավելագույն և	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	14	4.60	36.0	1940.0	960.0	95	35.30	840.0	7600.0	2540.0
Ապարան						1	1.37	130.0	1150.0	335.0
Թային						17	16.78	200.0	1680.0	340.0
Ծաղկահովիտ						1	2.66	170.0	2100.0	270.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ						145	42.41	740.0	10000.0	2005.0
Մասիս						49	17.41	400.0	5600.0	1070.0
Վեդի						98	39.75	450.0	7200.0	1270.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						53	38.71	650.0	4650.0	1240.0
Բաղրամյան						65	180.08	130.0	1000.0	450.0
Վաղարշապատ						89	44.40	980.0	11150.0	2160.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ								420.0	1100.0	650.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Մարտունի						7	1.84	100.0	4000.0	565.0
Սևան								100.0	1000.0	385.0
Վարդենիս						6	13.39	60.0	1180.0	235.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						16	12.61	360.0	5500.0	940.0
Գուգարք						2	0.47	500.0	6000.0	1400.0
Սպիտակ						2	1.31	500.0	3300.0	1040.0
Ստեփանավան						40	35.87	180.0	4000.0	340.0
Տաշիր						4	6.37	100.0	400.0	240.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	18	2.73	212.0	1464.0	820.0	85	28.65	520.0	10100.0	5700.0

Եղվարդ	5	5.00	314.0	314.0	314.0	93	38.94	380.0	6100.0	2635.0
Հրագղան						19	11.53	250.0	4000.0	745.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						34	32.19	550.0	760.0	685.0
Ամասիա						2	5.52	80.0	525.0	190.0
Անի						10	10.45	240.0	800.0	290.0
Աշոցք								60.0	210.0	130.0
Արթիկ						38	33.80	140.0	800.0	260.0
Սյունիքի մարզ										
Գորիս						6	2.32	200.0	1600.0	395.0
Կապան								120.0	2000.0	330.0
Մեղրի								400.0	4240.0	858.0
Սիսիան						14	12.54	90.0	1500.0	295.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						11	3.26	260.0	4000.0	1420.0
Վայք						7	3.35	120.0	3400.0	645.0
Տավուշի մարզ										
Բերդ						9	5.42	100.0	2000.0	470.0
Իջևան						2	1.01	530.0	4000.0	1050.0
Նոյեմբերյան						5	1.37	100.0	8340.0	695.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի գտնվելու վայրից և հողատեսքերից:

2003թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 571 առուվաճառքի գործարքներ, այդ թվում աճուրդ-վաճառքների 103, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսաող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսաող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	11	14550.0	43.0	62.0	57.0	45	46635.0	120.0	3800.0	2220.0
Ապարան								120.0	670.0	310.0
Թային						2	3920.0	78.0	440.0	125.0
Ծաղկահովիտ								78.0	180.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	31	37258.0	185.0	200.0	195.0	25	25370.0	175.0	2460.0	655.0
Մասիս	2	1200.0	338.0	342.0	340.0	53	39180.0	270.0	3680.0	795.0
Վեդի						20	20690.0	115.0	1000.0	495.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						12	10728.0	180.0	2440.0	745.0
Բաղրամյան						2	3200.0	120.0	280.0	200.0
Վաղարշապատ						43	48500.0	280.0	3700.0	1260.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						9	6680.0	180.0	1000.0	520.0



Ճամբարակ								78.0	180.0	140.0
Մարտունի	14	16800.0	75.0	118.0	90.0	38	51430.0	120.0	320.0	225.0
Մևան						1	950.0	120.0	1000.0	240.0
Վարդենիս								78.0	180.0	120.0
Լոռու մարզ										
Ալավերդի	12	14620.0	108.0	110.0	109.0	2	5230.0	78.0	440.0	200.0
Գուգարք						1	1980.0	78.0	3800.0	675.0
Սպիտակ						1	1010.0	78.0	450.0	160.0
Ստեփանավան						2	2640.0	78.0	340.0	142.0
Տաշիր						1	2090.0	78.0	180.0	130.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	2030.0	60.0	166.0	114.0	99	88520.0	180.0	4300.0	1425.0
Եղվարդ	31	27800.0	90.0	305.0	200.0	80	87444.0	180.0	3670.0	1695.0
Հրազդան						3	2070.0	180.0	4120.0	1300.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						8	5673.0	120.0	2500.0	325.0
Ամասիա								78.0	180.0	135.0
Անի						4	5391.0	120.0	430.0	185.0
Աշոցք								78.0	120.0	110.0
Արթիկ						1	400.0	120.0	440.0	190.0
Սյունիքի մարզ										
Գորիս						5	6417.0	78.0	670.0	380.0
Կապան								78.0	1000.0	410.0
Մեղրի								78.0	450.0	230.0
Սիսիան								78.0	450.0	230.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						4	3772.0	78.0	990.0	300.0
Վայք								78.0	1000.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								78.0	670.0	170.0
Իջևան						6	4550.0	78.0	1600.0	520.0
Նոյեմբերյան						1	1320.0	78.0	670.0	210.0

2003թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 40 գործարքներ 36.84 հա մակերեսով, ընդ որում 18-ը Արարատի /4.60 հա/, 1-ը Արմավիրի /2.0 հա/, 2-ը Գեղարքունիքի /0.66 հա/, 6-ը Կոտայքի /2.42 հա/, 6-ը Շիրակի /20.13 հա/ և 7-ը Տավուշի /7.02 հա/ մարզերում:

2003թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել են վարձակալության 1909 գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը 2002թ. չորրորդ եռամսյակ համեմատ նվազել է 1,3%-ով, իսկ 2003թ. երրորդ եռամսյակ համեմատ աճել՝ 22,5%-ով:

2003թ. չորրորդ եռամսյակում վարձակալության գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2003թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 139 բնակարանների, 46 բնակելի տների, 467 հասարակական, 89 արտադրական նշանակության օբյեկտների, 7 ավտոտնակների և 1161 հողերի վարձակալության գործարքներ:

2003թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 121 վարձակալության գործարքների քանակները 2002թ. չորրորդ եռամսյակի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 53,6%-ով, իսկ 2003թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 6,9%-ով:

2003թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալվել են 3978.27 հա ընդհանուր մակերեսով հողեր /10.62 հա Երևանում/: Մարզերում վարձակալված

հողերից 3811.82 հա կազմում են գյուղատնտեսական /որից 599.50 հա նախկին պահուստային/, 17.18 հա բնակավայրերի, 2.15 հա անտառային, 136.50 հա արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Շիրակի մարզում՝ 715.68 հա , որից 710.66 հա գյուղատնտեսական նշանակության, առավել փոքր՝ 70.68 հա, Վայոց Ձորի մարզում, որից 67.38 հա գյուղատնտեսական նշանակության:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 572.00 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2003թ. չորրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտ. նշ. հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտ. նշ. հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	1	200.00	80	317.14
Արարատ	0	0.00	81	663.83
Արմավիր	0	0.00	154	685.21
Գեղարքունիք	6	64.00	87	510.51
Լոռի	0	0.00	23	69.86
Կոտայք	0	0.00	106	285.55
Շիրակ	4	308.00	57	402.66
Սյունիք	0	0.00	15	133.40
Վայոց Ձոր	0	0.00	25	67.38
Տավուշ	0	0.00	33	104.28
<b>Ընդամենը</b>	<b>11</b>	<b>572.00</b>	<b>661</b>	<b>3239.82</b>

2003թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1778 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.9%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակները երրորդ եռամսյակի համեմատ աճել են՝ 62.8%-ով, իսկ 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 58.8%-ով, ընդ որում 33.0%-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից, իսկ գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /35.4%/, հասարակական նշանակության օբյեկտների /17.4%/, առանձնատների /12.1%/ և հողերի /30.7%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 744 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2002թ. չորրորդ եռամսյակ համեմատ աճել է 39.8%-ով, իսկ 2003թ. երրորդ եռամսյակ համեմատ՝ 18.1%-ով:

Ընդհանուր առմամբ, 2003թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 781.39 հա մակերեսով հողեր /4.72 հա Երևանում/, որից 774.35 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 371.01 հա, որից 368.69 գյուղատնտեսական նշանակության:

2003թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների մասնավորեցման /ապապետականացման միջոցով/ համապատասխանաբար, 102 և 16 գործարքներ, որոնց ընդհանուր քանակը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.5%: 2003թ. չորրորդ եռամսյակում հանրապետության մարզերում մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 15.7%-ով, իսկ 2003թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 53.2%-ով: 2003թ. չորրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 35.6%:

2003թ. հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի առաջնային գրանցումների 3342 գործարքներ, որոնց քանակը 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 21.3%-ով, իսկ 2003թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 12.7%-ով:

Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.9%: Քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /42.9%/: Ընդ որում առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

## ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***